Թարգմանությունը՝ անգլերենից հայերեն կատարվել է Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից

Հակակոռուպցիոն գործակալությունների գործունեության սկզբունքների մասին Ջակարտայի հայտարարություն

Ջակարտա, 2012թ. Նոյեմբերի 26-27

2012թ. Նոյեմբերի 26-27-ին աշխարհի բազմաթիվ հակակոռուպցիոն գործակալությունների (ՀԿԳ) նախկին և ներկայիս ղեկավարները, հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվողները և մասնագետները հավաքվեցին Ջակարտայում Ինդոնեզիայի Կոռուպցիայի վերացման հանձնաժողովի (ԿՎՀ), ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի (ՄԱԶԾ) և ՄԱԿ-ի Թմրանյութերի և հանցագործության գրասենյակի (ՄԱԹՀԳ) հրավերով՝ քննարկելու «Հակակոռուպցիոն գործակալությունների գործունեության սկզբունքների» համակցությունը ՀԿԳ-ների անկախությունը և արդյունավետությունը ամրապնդելու նպատակով:

Մասնակիցների թվում էին մի շարք ՀԿԳ-ների ղեկավարներ և տարածաշրջանային ցանցերի ներկայացուցիչներ, մասնավորապես՝ Արևմտյան Աֆրիկայի Ազգային հակակոռուպցիոն հաստատությունների ցանցը, Հարավ-արևելյան Ասիայի կուսակցություններն ընդդեմ կոռուպցիայի, Արաբական հակակոռուպցիոն և բարեխղճության ցանցը, Կոռուպցիայի դեմ հարավաֆրիկյան ֆորումը, Հակակոռուպցիոն իշխանությունների արևելաաֆրիկյան ասոցիացիան և Եվրոպական գործընկերներն ընդդեմ կոռուպցիայի/Եվրոպական հակակոռուպցիոն շփման կետ ցանցը (ԵԳԸԿ/ԵՀՇՑ):

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի թմրանյութերի և հանցագործության գրասենյակի, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների բարձրագույն հանձնակատարի և Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի ներկայացուցիչները մասնակցեցին հանդիպման վարույթներին, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը և Համաշխարհային բանկը ևս ունեցան իրենց ներդրումները կոնֆերանսի աշխատանքներին:

Մասնակիցները վերանայեցին և քննարկեցին աշխարհի երկրների փորձառությունները, ՀԿԳ-ների առջև ծառացած մարտահրավերները և ՀԿԳ-ների անկախությունն ու արդյունավետությունը ապահովելու գլխավոր պահանջները:

Հաշվի առնելով, որ Կոնֆերանսը նպատակ ուներ քննարկել և մշակել ՀԿԳ-ների անկախությունն ու արդյունավետությունը ամրապնդելու ուղեցույց,

Գիտակցելով ամբողջ աշխարհում ՀԿԳ-ների բազմազանությունը կոռուպցիայի դեմ պայքարում, այդ թվում՝ որոշ ՀԿԳ-ներ լիազորված են կանխելու կոռուպցիան, մյուսները կենտրոնացած են հետաքննության կամ հետախուզման վրա, կամ էլ ենթադրում են այս գործառույթների համակցություն,

Վերհիշելով տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում միջազգային հանձնառությունները և պարտավորությունները ՀԿԳ-ների անկախությունն ապահովելու ուղղությամբ, այդ թվում՝ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան (ՄԱԿԴԿ),

Վերհիշելով Հակակոռուպցիոն իշխանությունների միջազգային ասոցիացիայի կողմից (ՀԿԻՄԱ) Հինգերորդ ամենամյա համաժողովի և համընդհանուր ժողովի ժամանակ

ընդունված Մարաքեշի հռչակագիրը, մասնավորապես՝ «համատեղ գործողությունների և աջակցության խոստումը՝ […] երաշխավորելու, որ հակակոռուպցիոն իշխանությունները […] կարող են գործել անհրաժեշտ անկախությամբ, ապահով և կայուն ֆինանսավորմամբ և պրոֆեսիոնալ վերապատրաստում անցած մասնագիտացված անձնակազմով, որպեսզի գործեն արդյունավետ և անկախ որևէ անհարկի ազդեցությունից՝ ՄԱԿԴԿ 6 և 36 հոդվածների համաձայն»:

Վերհիշելով նաև ՄԱԿԴԿ անդամ պետությունների համաժողովի կողմից ՄԱԿԴԿ երրորդ և չորրորդ նստաշրջանների ընթացքում ընդունված 3/2, 3/3 և 3/4 բանաձևերը, որոնք ընդունում են ՀԿԳ-ների «անկախությունը և արդյունավետությունն ապահովելու կենսական կարևորությունը»,

Արժևորելով Եվրոպական գործընկերներն ընդդեմ կոռուպցիայի/Եվրոպական հակակոռուպցիոն շփման կետ ցանցի (ԵԳԸԿ/ԵՀՇՑ) կողմից մշակված հակակոռուպցիոն իշխանության ստանդարտները, որոնք նաև ողջունվեցին ՀԿԻՄԱ վեցերորդ ամենամյա համաժողովի և Համընդհանուր ժողովի կողմից:

Կարևորելով Մեծ Քսանյակի՝ իրենց օրինակով առաջնորդելու վճռականությունը՝ «ամրապնդելով հակակոռուպցիոն մարմինների կամ իրավապահ կառույցների արդյունավետ գործունեությունը կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի գործում՝ երաշխավորելով, որ այդ լիազոր մարմիններն իրենց գործունեությունն իրականացնեն որևէ անհարկի ազդեցությունից զերծ»:

Գնահատելով Բրազիլիայում կայացած 15-րդ Միջազգային հակակոռուպցիոն համաժողովի շրջանակներում Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի ջանքերը՝ առաջ տանելու ՀԿԳ-ների անկախությունն ու արդյունավետությունը;

Մասնակիցները.

1. **Առաջարկում են** հետևյալ սկզբունքները՝ ՀԿԳ-ների անկախությունն ու արդյունավետությունն ապահովելու համար.
   - **Լիազորություններ:** ՀԿԳ-ները պետք է ունենան կանխարգելման, ուսուցումների, իրազեկվածության բարձրացման, հետաքննության և հետախուզության միջոցով կոռուպցիայի դեմ պայքարի հստակ լիազորություններ՝ մեկ կամ մի քանի համակարգվող գործակալությունների միջոցով:
   - **Համագործակցություն:** ՀԿԳ-ները չպետք է գործեն մեկուսացված: Դրանք պետք է ամրապնդեն լավ աշխատանքային հարաբերություններ պետական գործակալությունների, քաղաքացիական հասարակության, մասնավոր ոլորտի և այլ շահառուների հետ, այդ թվում միջազգային համագործակցությունը:
   - **Մշտականություն:** ՀԿԳ-ները պետք է այդ երկրների հիմնարար իրավական սկզբունքների համաձայն հաստատվեն պատշաճ և կայուն իրավական շրջանակներում, ինչպիսին է Սահմանադրությունը կամ ՀԿԳ-ների շարունակական գործունեությունն ապահովող որևէ հատուկ օրենքը:
   - **Նշանակումներ:** ՀԿԳ-ների ղեկավարները պետք է նշանակվեն մի գործընթացի միջոցով, որն ապահովում է նրանց ապաքաղաքական դիրքորոշումը, անկողմնակալությունը, չեզոքությունը, բարեխղճությունն ու իրավասությունը:

- **Շարունակականություն:** Կասեցման, հեռացման, պաշտոնաթողության, թոշակի անցնելու կամ պաշտոնավարության ավարտի պարագայում ՀԿԳ ղեկավարի բոլոր լիազորություններն օրենքով պետք է խելամիտ ժամկետներով անցնեն ՀԿԳ-ի համապատասխան պաշտոնյայի՝ մինչև ՀԿԳ նոր ղեկավարի նշանակումը:
- **Աշխատանքից հեռացում:** ՀԿԳ ղեկավարները պետք է ունենան պաշտոնավարման անվտանգություն և պետք է աշխատանքից հեռացվեն միայն իրավականորեն հաստատված ընթացակարգով, որը հավասարազոր է օրենքով պաշտպանված կարևոր անկախ իրավասու մարմնի (ինչպես՝ Գլխավոր Դատավորը) պաշտոնազրկման ընթացակարգին:
- **Բարոյական վարքագիծ:** ՀԿԳ-ները պետք է ընդունեն վարքագծի կանոններ, որ պահանջում են բարոյական վարքագծի առավելագույն չափանիշների կիրառում իրենց աշխատակիցների կողմից, և համապատասխանության ամուր ռեժիմ:
- **Անձեռնմխելիություն:** ՀԿԳ ղեկավարները և աշխատողները պետք է անձեռնմխելի լինեն քաղաքացիական և քրեական գործերի հանդեպ իրենց լիազորությունների իրականացման շրջանում իրականացված գործողությունների համար: ՀԿԳ ղեկավարները և աշխատակիցները պետք է պաշտպանված լինեն կեղծ քաղաքացիական և քրեական գործերից:
- **Վարձատրություն:** ՀԿԳ աշխատակիցները պետք է վարձատրվեն այնպես, որ հնարավոր լինի բավարար թվով մասնագիտացված աշխատակազմի գործի ընդունել:
- **Մարդկային ռեսուրսների հանդեպ իրավասություն:** ՀԿԳ-ները պետք է լիազորություն ունենան՝ հավաքագրելու և հեռացնելու իրենց անձնակազմի անդամներին՝ համաձայն իրենց ներքին պարզ և թափանցիկ ընթացակարգերի:
- **Համապատասխան և վստահելի աղբյուրներ:** ՀԿԳ-ները պետք է ունենան բավարար ֆինանսական ռեսուրսներ՝ իրենց հանձնառություններն իրականացնելու համար՝ հաշվի առնելով երկրի բյուջետային ռեսուրսները, բնակչության թվաքանակը և տարածքը: ՀԿԳ-ներին պետք է տրամադրել ժամանակային, պլանավորված, վստահելի և պատշաճ ռեսուրսներ՝ ՀԿԳ-ների գործունեության բարելավման և կարողությունների աստիճանական զարգացման, ինչպես նաև ՀԿԳ-ների լիազորությունների իրագործման նպատակով:
- **Ֆինանսական ինքնուրույնություն:** ՀԿԳ-ները պետք է ստանան բյուջետային բաշխումներ, որոնք ՀԿԳ-ները կտնօրինեն և կվերահսկեն առանց համապատասխան հաշվապահական չափանիշների և աուդիտային պահանջների սահմանափակման:
- **Ներքին հաշվետվողականություն:** ՀԿԳ-ները պետք է մշակեն և հաստատեն պարզ կանոններ և ստանդարտ գործընթացներ, այդ թվում՝ մոնիթորինգային և կարգապահական մեխանիզմներ՝ նվազեցնելու ՀԿԳ-ների կողմից անընդունելի վարքագիծը կամ լիազորությունների չարաշահումը:
- **Արտաքին հաշվետվողականություն:** ՀԿԳ-ները պետք է խստորեն հետևեն օրենքի գերակայությանը և հաշվետու լինեն իշխանության չարաշահումների կանխման նպատակով հիմնադրված մեխանիզմների առջև:
- **Հանրային զեկուցում:** ՀԿԳ-ները պետք է տարեկան առնվազն մեկ անգամ պաշտոնապես հանրությանը զեկուցեն իրենց գործունեության մասին:

- **Հանրային հաղորդակցություն և ներգրավվածություն:** ՀԿԳ-ները պետք է կանոնավոր կերպով հաղորդակցվեն և ներգրավվեն հանրության մեջ, որպեսզի ապահովեն իրենց անկախության, արդարացիության և արդյունավետության հանդեպ հանրային վստահությունը:

2. **Խրախուսում են** ՀԿԳ-ներին՝ առաջ տանելու վերոհիշյալ սկզբունքները իրենց համապատասխան գործակալություններում, երկրներում և ՀԿԳ-ների տարածաշրջանային ցանցերում;
3. **Խրախուսում են** ՀԿԳ-ներին առաջ տանելու այս սկզբունքները՝ աջակցելու գործադիր և օրենսդիր իշխանության անդամներին, քրեական դատավարության ոլորտում գործողներին և ընդհանուր հասարակությանը ավելի լավ հասկանալու և նպաստելու ՀԿԳ-ների գործառույթների իրականացմանը;
4. **Կոչ են անում** ՀԿԳ-ներին՝ դիմելու իրենց համապատասխան Կառավարություններին և այլ շահառուներին՝ առաջ տանելու այս սկզբունքները միջազգային հակակոռուպցիոն համաժողովներում:
5. **Արտահայտում են** իրենց բարձր գնահատականն ու երախտագիտությունը Ինդոնեզիայի Կոռուպցիայի վերացման հանձնաժողովին ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և ՄԱԿ-ի Թմրանյութերի ու հանցագործության գրասենյակի աջակցությամբ «Հակակոռուպցիոն գործակալությունների սկզբունքներ» միջազգային համաժողովը հյուրընկալելու համար՝ ուղված ՀԿԳ-ների գործունեության սկզբունքների շուրջ քննարկումներին և համաձայնության հասնելուն: